պիսի խայտառակ ձեւերը, իբրեւ բնիկ կը մնայ միայն հազիւ տասը բառ. Աղէ, թէ՞ կոչէ՞, թէ, երէ, մարգարէ, միրէ, պախրէ, վալէ, տրէ, քերծէ։

Բ

Երկրորդ պարագային՝ այսինքն երբ է ձայնը կը կազմէ բառին վերջընթեր տառը, կրնայ գրուիլ թէ՛ ե և թէ է. այս պարագային կախում ունի յաջորդ՝ այսինքն բառին վերջին տառէն։ Տառեր կան որ կը պահանջեն ե և կան ալ որ կը պահանջեն է. կան նաեւ տառեր որ կը պահանջեն թէ՛ մին և թէ միւսը։

1°. ե կը պահանջեն բ, ղ, խ, կ, հ, ղ, մ, ռ, ր, ջ, փ, ք։ Օրինակ՝

Թ. — աբեր, ամեր, անհեբեր, բեբ՝ քամուած ձէթ, երեբ, եռեբ, ձաւակեբ՝ աղջիկ զաւակ, զուտոբ, սեբեռեբ, քրեբ՝ քթանէ չուան, փաբեբ՝ կծիկ։

Երեբ բառը (երեբն առեալ՝ հինցած, մաշած) կը գրուի ե-ով. թէեւ կայ երիբացեալ՝ հին, մաշած, պատառատուն՝ որ կը պահանջէ երեբ ձեւ մը։

Բակեղեբ, գմբեբ, գեբ, խեբ (և ասկէ բռնիսեբք՝ բռնցի հրել, զարնել) կը գրուին թէ՛ ե-ով և թէ է-ով. կանոնին յարմար է գրել ե-ով։

Բացառութիւն են ձեբ և Սապեռեբ՝ անվաւեր Գործք Առաքելոց։

Լ. — առաձել, առել, բել, խել-ք, բայերու անեբեւոյթները՝ սիրել, խօսել, և այլն։

Գել՝ ծուռ, կել՝ գաւ, նենգութիւն կը գրուին թէ՛ ե-ով և թէ է-ով. կանոնաւոր է գրել ե-ով։

Բացառութիւն կրնայ համարուիլ յետին և օտար տամոռժել կամ տամոնջել՝ օրիորդ, որ արդէն գործածութենէ ինկած է։

Խ. — սեխ, մեղմեխ, մեղեխ, մժեխ, պեխ։

Բացառութիւն չունի։

Կ. — օրեկ, ձայեկ, բեռեկ-ն, ղեկ, պարեկ, բեպեկ՝ կապիկ, բեկ՝ և ասկէ խեկրեկ, ծնեբեկ, քարբեկ, և այլն, սաբեկ, ռեկ՝ ճեղքուած ալիք, իրազեկ, արեկ՝ զօրաւոր, բարձր. պտեկ՝ պզտիկ փարշ, ռշմեկ՝ սիրտ ամրքել, ցերեկ, սեկ, սերեկ՝ կաշիէ խուփ, երեկ՝ երեկոյ, փեձեկ։

Կան եակ վերջացող խումբ մը բառեր որոնք սղուելով կ՚ըլլան եկ. օր. կղայեկ, հմայեկ, ցախսարեկ, և այլն։

Երբայեցերէն Սորեկ՝ ազնիւ որթ մը՝ կը գրուի Սորեկ, Սորկի, Սովրեք. կանոնաւոր է գրել ե-ով։

Երեկ (օր) կը գրուի է-ով՝ զանազանելու համար երեկ (երեկոյ) բառէն։

Շեկ, բեկն (թիկունք) կը գրուին թէ ե-ով և թէ է-ով. կանոնաւոր է գրել ե-ով, թէ և բարդուած բառերը ի կը ցուցնեն. շիկերկ, բիկնեղ. հմմտ. պնակալեզ, լեզոռ, լիզել. — դեռ, դիւի, դիւական, դիւահար։

Անորոշ բառ է պատշեկ կամ պատշեն՝ շոգ, ճաճանչ, ճառագայթ։

Բացառութիւն են աղեկ, մեկ, աբաբեկ. երեքն ալ յետին. որոնց կանոնաւոր ձեւը պիտի ըլլար աղեկ, մեկ (միակ. ինչպէս կան մեկ-ին, մեկ-նակ, և այլն). բեկ, աբաբեկ՝ օտար է։

Հ. — հրդեհ, Զարեհ՝ յատուկ անուն և հասարակ անուն՝ ծովեզերեայ խոտ մը, դեհ, վեհ, պատեհ, գոեհ, նսեհ, նժդեհ։

Բացառութիւն չկայ։

Ղ. — աղեղ-ն, ասեղ-ն, դեղ, շեղ, թիրեղ-ն, կանեղ, բաղեղ-ն, ոռղեղ, մղեղ՝ փոշի, մնչեղ՝ ծառի անուն, մժեղ, հեղեղ, առեղ՝ անուին սեռին ծայրը, նեղ, կեղ. — եղ մասնիկը՝ զօրեղ, ոռժեղ. — ղ յանգող բառերու սեռականը՝ ասուեղ։

Բացառութիւն է թեղք՝ թել, թելերու շարք։

Մ. — նսեմ, համեմ, խոռեմ, վսեմ, ձեմ, սքեմ, կոտեմ-ն, ոռեմ-ն, ոռատեմ-ն, պռեմ-ն՝ արու վայրի թզենի, պսեմ՝ վարդի փուշ. — բայերու եզակի առաջին դէմքը՝ սիրեմ, իցեմ, և այլն։

Հեմ՝ այժմ, հիմայ. բեմ՝ վիճակ կը գրուին թէ՛ ե-ով և թէ է-ով. կանոնաւոր է գրել ե-ով։

Բացառութիւն են դեմ՝ (և ասկէ բարդուածները՝ ընդդեմ, տարադեմ, դեմք, և այլն), և վեմ։

Ռ. — սեռն, սիսեռն, բեռ-ն, խեռ, սեռ, տեռ՝ շղարշ, ձեռ-ք, դեռ, տիտեռ-ն՝ նհանգ, կոկորդիլոս, նեռ-ն, բեռեռ, հեռ։